ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունվարի 2022թվականի N 01

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 131/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՆԳԱՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԱԾԿԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՄԱՅԻՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, մասին Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արթուր Մայիսի Մարտիրոսյանի /ծնված 1971թվականի օգոստոսի 15-ին, Միկրոշրջան թաղամասի 42 շենքի 27 բնակարանի / բնակիչ 2022 թվականի հունվարի 3-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի <<Ջրառատ թաղամաս>> լիազոր ներկայացուցչի կողմից 2022 թվականի հունվարի 3-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 131/1 հասցեում Արթուր Մայիսի Մարտիրոսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով հողամասի և նրա վրա ինքնակամ կառուցած 36.97 քմ արտաքին մակերեսով կիսանկուղի, ինքնակամ կառուցած 22.08 քմ արտաքին մակերեսով առաջին հարկի, ինքնակամ կառուցած 6.64 քմ

մակերեսով աստիճանավանդակի, ինքնակամ կառուցած 14.20քմ արտաքին մակերեսող խորդանոցի, ինքնակամ կառուցած 32.82 քմ մակերեսով մետաղական անգարի և ինքնակամ կառուցած 4.55 քմ մակերեսով ծածկարանի սեփականության իրավունքը:

2.Վերականգնել Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 131/1 հասցեում գտնվող Արթուր Մայիսի Մարտիրոսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Արթուր Մայիսի Մարտիրոսյանի սեփականության իրավունքը:

3.Ինքնակամ կառուցած կիսանկուղը, ինքնակամ կառուցած առաջին հարկը, ինքնակամ կառուցած աստիճանավանդակը, կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:

4.Համաձայն Կառավարության 2006 թվականի 18-ի թիվ 912 որոշմամբ, սույն որոշման ընդունման օրվանից բնակելի տան ինքնակամ կառուցած 14.20 քմ արտաքին մակերեսով խորդանոցի օրինականացման համար սահմանված 24000 / քսան չորս հազար / դրամ գումարը, ինքնակամ կառուցած 32.82 քմ մակերեսով մետաղական անգարի օրինականացման համար սահմանված 55000 / հիսուն հինգ հազար / դրամ գումարը, ինքնակամ կառուցած 4.55 քմ մակերեսով ծածկարանի օրինականացման համար սահմանված 7700 / յոթ հազար յոթ հարյուր / դրամ գումարը, վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

7.Բնակելի տան ինքնակամ կառուցած կիսանկուղը, ինքնակամ կառուցած առաջին հարկը, ինքնակամ կառուցած աստիճանավանդակը, ինքնակամ կառուցած խորդանոցը, ինքնակամ կառուցած մետաղական անգարը, ինքնակամ կառուցած ծածկարանը և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

8.Արթուր Մայիսի Մարտիրոսյանին պատկանող բնակելի տունը՝ պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս թիվ 131/1 :

9.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Արթուր Մայիսի Մարտիրոսյանին սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

10.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 հունվարի 2022թ
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հունվարի 2022թվականի N 02

ԲԵՏՈՆՀԱՆԳՈՒՅՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Լյովա Վարդանյանի 2022 թվականի հունվարի 11-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 53 տան բնակիչ Լյովա Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2549790, տրված՝ 2008 թվականի հունիսի 28-ին) Հրազդան քաղաքի արդյունաբերական գոտում գտնվող բետոնհանգույցին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Գործարանային փողոց 1/2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022թվականի N 03

ԽԱՆՈՒԹ-ՍՐԱՀԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Էդիկ Հակոբյանի 2022 թվականի հունվարի 10-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Խ.Կեչառեցու փողոց 69/2 տան բնակիչ Էդիկ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1220959, տրված՝ 2004 թվականի նոյեմբերի 15-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 104 շենքին հարող տարածքում գտնվող խանութ-սրահին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջորավար Անդրանիկի պողոտա 158:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հունվարի 2022թվականի N 04

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Անուշ Պետրոսյանի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2022 թվականի հունվարի 4-ի թիվ 2 մասնագիտական եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0511-0001-ից ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 12-րդ փողոց 18/4:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 205 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Անուշ Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 12-րդ փողոց 18/4 հասցեում գտնվող 23.7քմ արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական:
3.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի 12-րդ փողոց 18/4 հասցեում գտնվող 23.7քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից փոփոխել

հասարակական կառուցապատման:
4.Հասարակական սպասարկման օբյեկտի և դրանով զբաղեցված 23.7քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022թվականի N 05

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՍՊՈՐՏԻ, ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ՇԵՆՔԻ՝ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻ, ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Ռաֆայել Հակոբյանի 2021 թվականի մայիսի 12-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեխնիկական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 0146-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 77/28:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 77 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Ռաֆայել Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 77/28 հասցեում գտնվող64.4քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության սպորտի, հանգստի և ժամանցի շենքը՝ սպորտային դահլիճը, ճանաչել օրինական:

3.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամաս 77/28 հասցեում գտնվող 64.4քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից փոփոխել հասարակական

կառուցապատման:
4.Սպորտի, հանգստի և ժամանցի շենքը՝ սպորտային դահլիճը և դրանով զբաղեցված 64.4քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022թվականի N 06

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՄՐԱՀԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՋՈՒԳԱՐԱՆԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ՊԱՐՄՊԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Նորիկ Գալստյանի 2021 թվականի հունվարի 20-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՀ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2022 թվականի հունվարի 4-ի թիվ 1 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 0509-0002-ից ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 46/1:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Տիգրան Մեծի փողոց 2-րդ նրբանցք թիվ 15 տան բնակիչ Նորիկ Գալստյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 46/1 հասցեում գտնվող 14.02քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի սրահը, 13.69քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության բնակելի տունը, 12.65քմ մակերեսով բնակելի նշանակության աստիճանավանդակը, 1.96քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության զուգարանը, 15.23քմ արտաքին մակերեսով

բնակելի նշանակության տնտեսական շինությունը, 2.32քմ մակերեսով բնակելի նշանակության պարիսպը ճանաչել օրինական:

3.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 46/1 հասցեում գտնվող 396.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից փոփոխել խառը կառուցապատման:

4.Առնտրի սրահը, բնակելի տունը, աստիճանավանդակը, գուգարանը, տնտեսական շինությունը, պարիսպը և դրանցով զբաղեցված 396.0քմ մակերեսով բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022թվականի N 07

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Խաչիկ Տեր-Մկրտչյանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2021 թվականի նոյեմբերի 5-ին տրված տեխնիկական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հունվարի 7-ի N 20 գրավոր առաջարկությունը և Խաչիկ Տեր-Մկրտչյանի կողմից տրված 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 3 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Մարշալ Բաղրամյան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 124/1 հասցեում գտնվող՝ 89.89քմ մակերեսով բնակելի տունը, 116.45քմ մակերեսով առնտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը ճանաչել օրինական:
2.Հրազդան քաղաքի Մարշալ Բաղրամյան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 124/1 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 89.89քմ մակերեսով բնակելի տունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03012022-07-0132, գաղտնաբառ՝ UPMFQMBXX5EA/ գինը սահմանել 531000 /հինգ հարյուր երեսունմեկ հազար/ դրամ, 116.45քմ մակերեսով առնտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ գինը սահմանել 2064000 /երկու միլիոն վաթսունչորս հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող բնակելի տան, առնտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար առանձնացված 131.8քմ մակերեսով

հողամասը 586000 /հինգ հարյուր ութսունվեց հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 104 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Խաչիկ Տեր-Մկրտչյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով բնակելի տան, առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի համար սահմանված գումարները վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հունվարի 2022թվականի N 08

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վահե Կիրակոսյանի 2021 թվականի նոյեմբերի 18-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 109 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հունվարի 7-ի N 21 գրավոր առաջարկությունը և Վահե Կիրակոսյանի կողմից տրված 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 4 գրավոր համաձայնագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Մ.Բաղրամյան թաղամաս 33/2 հասցեում գտնվող՝ 68.15քմ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2.Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամաս 33/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 68.15քմ մակերեսով բնակելի տունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27122021-07-0149, գաղտնաբառ՝ CJUJF5WIA8LX/ գինը սահմանել 403000 /չորս հարյուր երեք հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող բնակելի տան համար առանձնացված 36.5քմ մակերեսով հողամասը 163000 /մեկ հարյուր վաթսուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 209 շենքի թիվ 33 բնակարանի բնակիչ Վահե Կիրակոսյանին (այսուհետ գնորդ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով բնակելի տան համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140

գանձապետական հաշիվներին:

4. Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022թվականի N 09

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասերով, հիմք ընդունելով 2021 թվականի նոյեմբերի 30-ին <<Կոտայքի մարզ>> նոտարական տարածքի կողմից տրված Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված գրանցամատյանում թիվ 9066, ժառանգական գործ 201(2021), սեփականության իրավունքի վկայագիրը՝ գրանցված գրանցամատյանում թիվ 9065, ժառանգական գործ 201(2021) և Սուսաննա Մարիբեկյանի 2022 թվականի հունվարի 10-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վերաձևակերպել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ներքին Աղբյուրակ թաղամասում գտնվող 0.06հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (վարելահող) հողամասի Հովհաննես Մարիբեկի Հունանյանի հետ 2006 թվականի մարտի 10-ին 25 տարի ժամկետով կնքված վարձակալության իրավունքի պայմանագիրը Երևան քաղաքի Ծարավ Աղբյուր 55/8 շենքի թիվ 40 բնակարանի բնակիչ Սուսաննա Խաչիկի Մարիբեկյանի անվամբ՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:
2.Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

12 հունվարի 2022թ.
ք.Հրազդան